Ա. 1871-74 յայտնի քարոզիչ Խորէն վարդապետ Ստեփանէն քարոզելով և բարեկարգելով եկեղեցին և դպրոցն՝ ըստ անհամբեր բնութեանն խիստ կարգապահութիւն պահանջելով եկեղեցական և դպրոցական կարգաց մէջ՝ քահանայք և ժողովուրդք չեն կարացել տանիլ, ուստի և հեռացել է Բագուից, հեռագրով Կաթուղիկոսի։

Բ. 1875-77. Մեսրովբ վարդապետ Ճերմակեան Կ. Պոլսեցի Մխիթարեան միաբանութիւնից դարձած Հայոց եկեղեցին (ի կաթոլիկ Պապականութենէ) 30 տուն կաթոլիկաց հետ միասին. սա եւս անհամբեր և խիստ բնաւորութեամբ վէճ և կռիւ յարուցանելով ժողովրդեան մէջ, հեռացել է Բագուից հեռագրով Սինոդի։

Գ. 1890-92. Էջմիածնեցւոց, Երուսաղեմացւոց, Նոր Նախջեւանցւոց, Բագուեցւոց, Զամախեցւոց և վերջը Երեւանցւոց յայտնի ամբարտաւան Կիւրեղ վարդապետ Սրապեան երբեմն Երուսաղէմայ միաբան՝ վարձուած իբր քարոզիչ. բայց գործով և բնաւորութեամբ խառնակիչ և խռովիչ, հոգեւոր իշխանութեանը բամբասելով՝ ապստամբեցրեց միամիտ ժողովրդոց էջմիածնայ դէմ, և այսպէս հեռացաւ։ Խեղճ Հայոց ժողովուրդ, փոխանակ վարդապետաց քարոզ և խրատ լսելոյ և Աւետարանի ձայն, ընդհակառակն լսում է նզովք, անէծք, հայհոյանք և բամբասանք։

Ափսո՜ս Բագուեցւոց դրամներն . . . ։

Վերջապէս Բագուեցիք բաղդ չունին քարոզչի մասին, ինչպէս ասում են և կրկնում։

Բայց որպէս զի՝ զոնէ Զամախի քաղաքի՝ թէ ոչ գաւառի ժողովուրդը զուրկ չմնայ Աւետարանի քաղցր խօսքերը և քարոզները լսելուց՝ (երբ ես բացակայ էի գանուում Զամախուց), 1889 թ. յունիսին. Զամախի քաղաքի Հայ ժողովրդեան խնդրանօք, բարձրապատիւ Մակար վարդապետ Բարխուդարեանցը թողեց վանական դպրոցի տեսչութիւնը և կրօնի դասերը, տարեկան 600 ռուբլի ռօճիկով եկաւ Զամախի իբրեւ քարոզիչ մնալու և այս 600 ռուբլին Զամախու Հայ ժողովուրդը խոստացաւ վճարել և չկարաց. ուստի և զայն գումարն հին եկեղեցւոյ դրամագլխի տոկոսեօքն լրացնել տուեցի։